**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԹՎՈՎ 21 (ՔՍԱՆՄԵԿ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ**

**Արձանագրություն թիվ 1**

**ք. Գյումրի** — **30 հոկտեմբերի 2018**

**Վարդանանց հր. 1** — **ժամը 11:00**

Կայացավ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 27-ի №30-Ա կարգադրությամբ ստեղծված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բազմաբնակարան շենքերի թվով 21 (քսանմեկ) սոցիալական բնակարանների բաշխման հանձնաժողովի (այսուհետ հանձնաժողով) նիստը՝ մասնակցությամբ հանձնաժողովի ներքոհիշյալ անդամների.

1. հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Սանոյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
2. քարտուղար՝ Հասմիկ Եղիազարյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ

անդամներ՝

3. Հրահատ Ստեփանյան – «ԱՈԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն
4. Գոռ Թորոսյան – «Առտ» ԵԲԽ ՀԿ նախագահ
5. Սեյրան Մարտիրոսյան – Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար
6. Մկրտիչ Դավթյան – աշխատակազմի բնակտնտեսության և համատիրությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ
7. Արման Շաքոյան – աշխատակազմի բնակտնտեսության և համատիրությունների համակարգման բաժնի առաջատար մասնագետ
8. Հենրիկ Գասպարյան – աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ
9. Վարդգես Սամսոնյան – «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի ժ/պ
10. Կարապետ Պողոսյան – ԷՅԷՄ իրավաբանական գրասենյակի Գյումրու մասնաճյուղի ղեկավար

**Օրակարգում՝**

1. Գյումրու համայնքապետարանի և «Առդա» բարեգործական հիմնադրամի կողմից համատեղ իրականացված բնակարանաշինության և Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեով նախատեսված բնակարանների բաշխման չափորոշիչների քննարկում և հաստատում:

(Ինֆ. հանձնաժողովի նախագահ Ռ. Սանոյան)

**Լսեցին**. - Հանձնաժողովի նախագահ Ռուբեն Սանոյանի ինֆորմացիան Գյումրու համայնքապետարանի և «Առդա» բարեգործական հիմնադրամի կողմից համատեղ իրականացրած բնակարանաշինության և Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեով նախատեսված բնակարանների գնման արդյունքում բաշխման ենթակա թվով 21 (քսանմեկ) բնակարանների համար մշակված չափորոշիչները, որոնցից 15-ը 1 սենյականոց, 5-ը 2 սենյականոց, 1-ը 3 սենյականոց:

Նշված սոցիալական բնակարանային ֆոնդից բնակելի տարածություն ստանալու համար շահառուների կարգավիճակի համապատասխանությունը առաջարկվեց որոշել հետևյալ չափորոշիչներով.

1. Վերջին 10 տարվա ընթացքում Գյումրի համայնքում հաշվառված և ժամանակավոր կացարանում (տնակում) փաստացի բնակվող:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունեցող (վերջին 5 տարվա ընթացքում):
3. Ընդգրկված է սոցիալական անապահովության գնահատման համակարգում:
4. Մեկ սենյականոց բնակարանները հատկացվելու են միայնակ կենսաթոշակառուներին, միայնակ կենսաթոշակառու ամուսիններին, հաշմանդամություն ունեցող միայնակ անձանց:
5. Երկու սենյականոց բնակարանները հատկացվելու են 3 (երեք) անչափահաս երեխա ունեցող ընտանիքների:
6. Երեք սենյականոց բնակարանը հատկացվելու է 4 (չորս) և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքին:
7. Բնակարանների բաշխումը իրականացվելու է վիճակահանության միջոցով:
8. Բնակարանները տրամադրվում են անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով և սեփականաշնորհման ենթակա չեն:
9. Բնակարանով ապահովվելուց հետո տնակների ապամոնտաժումը համարվում է պարտադիր պայման:

**Արտահայտվեցին** - Հ. Եղիազարյան, Ս. Մարտիրոսյան, Հ. Ստեփանյան, Գ. Թորոսյան, Կ. Պողոսյան, Հ. Գասպարյան

**Որոշեցին**

1. Հավանություն տալ սոցիալական բնակարանների բաշխման համար մշակված չափորոշիչներին:
2. Գյումրու համայնքապետարանի և «Առդա» բարեգործական հիմնադրամի համատեղ իրականացրած 11 սոցիալական բնակարանների բաշխման 2017 թվականի վիճակահանության արդյունքներով չշահած ներքոհիշյալ շահառուներին ևս ապահովել 2018 թվականին շահագործման հանձնվող բնակարաններով (Հավելված 1).

Հավելված 1

| Հ/Հ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆ | ՀԵՌԱԽՈՍ |
|---|---|---|---|
| | | | |
| 1 | ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷԼԻՏԱ ԳԱՐԵԳԻՆԻ | Հանրակացարան 5Ա, բն.5 | 094410718 |
| 2 | ԹՈՐՈՍՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ | 208/125 | 094756661 |
| 3 | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՕՖԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ | Շիրակշին 3 բանավան տնակ | 077358759 |
| 4 | ՁՎԱԿԵՐՅԱՆ ԷԼԱՐԻՍԱ ԵՐԵՄԻ | 223/084 | 093764326 |
| 5 | ՄԱՐՏԻԿՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՆԱԶԱՐԻ | 223/023ա | 077765720 |
| 6 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԻՄԱ ԲԵՆՅԱՄԻՆԻ | 207/123 | 094247695 |
| 7 | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ | 227/277 | 094915057 |

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Սանոյան

Քարտուղար՝ Հ. Եղիազարյան

Հանձնաժողովի անդամ՝ Հրահատ Ստեփանյան

Հանձնաժողովի անդամ՝ Գոռ Թորոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Սեյրան Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Մկրտիչ Դավթյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Շաբոյան

Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Գասպարյան

Հանձնաժողովի անդամ՝ Վարդգես Սամսոնյան

Հանձնաժողովի անդամ՝ Կարապետ Պողոսյան

Արձանագրություն 2

2018 թվականի նոյեմբերի 29-ին ժամը $11^{00}$ –ին տեղի ունեցավ բնակարանների բաշխման հանձնաժողովի նիստը մասնակցությամբ հանձնաժողովի ներքոհիշյալ անդամների՝

1. Ռուբեն Սանոյան –հանձնաժողովի նախագահ
2. Հասմիկ Եղիազարյան – հանձնաժողովի քարտուղար
3. Հրահատ Ստեփանյան
4. Հենրիկ Գասպարյան
5. Գոռ Թորոսյան
6. Մկրտիչ Դավթյան
7. Վարդգես Սամսոնյան
8. Արման Շաբոյան

Բացակայում էին երկուսը - Մարտիրոսյան Սեյրանը և Պողոսյան Կարապետը հարգելի պատճառով:

Օրակարգում

1. Գյումրու համայնքապետարանի և <<Առոգ>> բարեգործական հիմնադրամի սոցիալական բնակարանների բաշխման ձևաչափի քննարկում և հաստատում:

(ինֆ. Ռ. Սանոյան)

Լսեցին - Ռ. Սանոյանի ինֆորմացիան սոցիալական բնակարանների դիմումատուների ներկայացրած փաստաթղթերի իսկության և առկայության մասին:

Նշվեց նաև բաշխման ենթակա

8 հատ մեկ սենյականոց

2 հատ երկու սենյականոց

1 հատ երեք սենյականոց

և ավագանու 2018 թվականի նոյեմբերի 12 նիստի որոշումով 2 հատ երկու սենյականոց բնակարանների արտահերթ բաշխումը վիճակահանությամբ կազմակերպելու մասին:

Արտահայտվեցին- Հ. Եղիզարյան, Հ. Գասպարյան, Հ. Ստեփանյան

Որոշեցին

1. Գյումրու համայնքապետարանի և <<Առդա>> բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ շահագործման ենթակա սոցիալական 11 բնակարանները բաշխել վիճակահանության արդյունքներով ։
2. Վիճակահանությունը կազմակերպել փուլերով՝

Առաջին փուլ՝ թվով 11 դիմումատուներ կմասնակցեն 1 սենյականոց բնակարանի վիճակահանությանը նշված հասցեներով, 5 հատ համայնքի միջոցներով գնված և 3 հատ <<Առդա>> բարեգործական հիմնադրամի:

Երկրորդ փուլ՝ վիճակահանությանը կմասնակցեն 2017 թվականի վիճակահանության արդյունքերով բնակարան չստացած թվով 7 շահառուները:

Երրորդ փուլ ՝թվով 6 դիմումատուներ կմասնակցեն 2 սենյականոց բնակարանի վիճակահանությանը նշված հասցեներով:

Չորրորդ փուլ՝ թվով 2 դիմումատուներ կմասնակցեն 3 սենյականոց բնակարանի վիճակահանությանը նշված հասցեներով:

3. 2017 թվականին վիճակահանության արդյունքներով բնակարան չստացած 7 շահառուներին հաստկացնել բնակարան ՝ հասցեները վիճակահանությամբ որոշելու ձևաչափով:
    1. Գասպարյան Էլիտա Գարեգինի
    2. Թորոսյան Աղունիկ Մնացականի
    3. Հովհաննիսյան Օֆիկ Վաչագանի
    4. Ջվակերյան Էլարիսա Երեմի
    5. Մարտիկյան Մամիկոն Նազարի
    6. Մարտիրոսյան Ռիմա Բենյամինի
    7. Վարդանյան Սուսաննա Արամայիսի

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Մանոյան

Քարտուղար՝ Հ. Եղիազարյան

Հանձնաժողովի անդամ՝ Հրահատ Ստեփանյան

Հանձնաժողովի անդամ՝ Գոռ Թորոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Սեյրան Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Մկրտիչ Դավթյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Շաբոյան

Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Գասպարյան

Հանձնաժողովի անդամ՝ Վարդգես Սամսոնյան

Հանձնաժողովի անդամ՝ Կարապետ Պողոսյան

**Արձանագրություն թիվ 3**

**Ք. Գյումրի** **04 դեկտեմբերի 2018թ.**
**Վարդանանց հր.1** **Ժամը 11-⁰⁰,**

Կայացավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 27-ի N 30-Ա կարգադրությամբ ստեղծված Գյումրի քաղաքի բազմաբնակարան շենքերի թվով 21 (քսանմեկ) սոցիալական բնակարանների բաշխման վիճակահանությունը:

Վիճակահանությանը մասնակցում են՝ Գյումրի համայնքի ղեկավար պարոն Սամվել Բալասանյանը, Ռուբեն Սանոյանը (Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ), Հասմիկ Եղիազարյանը (Գյումրի համայնքի ավագանու անդամ), Հրահատ Ստեփանյանը՝ («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն), Գոռ Թորոսյանը («ԱՌՏ» ԵԲԽ ՀԿ նախագահ), Սեյրան Մարտիրոսյանը (Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար), Մկրտիչ Դավթյանը (աշխատակազմի բնակտնտեսության և համատիրությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ), Արման Շաքոյանը (Գյումրու Կոմունալ ծառայության տնօրենի տեղակալ), Վարդգես Սամսոնյանը (Գյումրու Կոմունալ ծառայության տնօրեն), Բացակայում էին երկուսը - Կարապետ Պողոսյանը (ԷԿԷՄ իրավաբանական գրասենյանի Գյումրու մասնաճյուղի ղեկավար) և Հենրիկ Գասպարյանը (աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ) սոցիալական բնակարանների թվով 22 շահառուներ, ինչպես նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Վիճակահանության գործընթացը վարում է՝ հանձնաժողովի նախագահ Ռուբեն Սանոյանը, արձանագրում է հանձնաժողովի քարտուղար՝ Հասմիկ Եղիազարյանը:

Վիճակահանության արդյունքում սոցիալական բնակարաններ ստացած շահառուների ցուցակը.

**Առդիր՝ 1(մեկ թերթ)**

**Թվով 21 սոցիալական բնակարանների շահառուներ**

| Հ/Հ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ |
|---|---|
| **3 սենյականոց բնակարանի շահառու** | |
| 1 | Նվեր Ասատրյան Սամվելի |
| **2 սենյականոց բնակարանի շահառու** | |
| 1 | Նաթելա Ստեփանյան Վանիկի |
| 2 | Դավիթ Աթոյան Արայի |
| 3 | Սյունե Ավագյան Սուրենի |
| 4 | Հայկուշ Հակոբյան Ռոբերտի |
| 5 | Անի Սահակյան Կարապետի |
| **1 սենյականոց բնակարանի շահառու** | |
| 1 | Մարգուշ Գրիգորյան Գևորգի |
| 2 | Ասյա Խաչատրյան Մոսկովի |
| 3 | Լաուրա Մարտիրոսյան Գեղամի |
| 4 | Գրիգոր Միքայելյան Միքայելի |
| 5 | Մարիետա Քեշիշյան Արմենակի |
| 6 | Աղունիկ Թորոսյան Մնացականի |
| 7 | Էլարիսա Ձվակերյան Երեմի |
| 8 | Սուսաննա Վարդանյան Արամայիսի |
| 9 | Մամիկոն Մարտիկյան Նազարի |
| 10 | Անահիտ Մխիթարյան Թորգոմի |
| 11 | Օֆիկ Հովհաննիսյան Վաչագանի |
| 12 | Էլիտա Գասպարյան Գուրգենի |
| 13 | Նարա Ավագյան Մաքսիմի |
| 14 | Ռիմա Մարտիրոսյան Բենիամինի |
| 15 | Սիրանուշ Պետրոսյան Օքսենի |

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Ռուբեն Սանոյան |
| հանձնաժողովի քարտուղար՝ | Հասմիկ Եղիազարյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Հրահատ Ստեփանյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Կարապետ Պողոսյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Վարդգես Սամսոնյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Մկրտիչ Դավթյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Արման Շաբոյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Հենրիկ Գասպարյան |
| հանձնաժողովի անդամ ՝ | Սեյրան Մարտիրոսյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Գոռ Թորոսյան |